



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

----- 2017 թվականի №---Ա
ք.Երևան

**«ԷՆԵՐԳԱՑԱՆՑԻՆ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ
(ՀԶՈՐՈՒԹՅԱՆ) ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ №0084 ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017 թվականի փետրվարի 22-ի №42Ա որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) մինչև 2032 թվականի փետրվարի 22-ը երկարաձգվել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 20-ի «Նարեկ-Լ.Կ.» ՍՊԸ-ին էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №8 որոշմամբ «Նարեկ-Լ.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և Հանձնաժողովի 2004 թվականի դեկտեմբերի 24-ի №177Ա որոշմամբ «ԷՆԵՐԳԱՑԱՆՑԻՆ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) անվամբ վերաձևակերպված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0084 լիցենզիայի գործողությանը ժամկետը,

բ) Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետով Ընկերությունը պարտավորեցվել է Որոշումն ուժի մեջ մտնելու պահից վեցամսյա ժամկետում՝ մինչև 2017 թվականի օգոստոսի 22-ը, Հանձնաժողով ներկայացնել Հայաստանի Հանրապետության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից տրամադրված Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ցեմենտի գործարանի տեխնիկական ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվության և տեխնիկական ջրատարի օգտագործման (ջրատարից օգտվելու) կամ ջրատարին միանալու պայմանագրի (թույլտվության) պատճենները, սակայն սահմանված ժամկետում այդ պարտավորությունը չի կատարվել, ուստի Հանձնաժողովը նշված

խախտման փաստի ուսումնասիրության նպատակով 2017 թվականի օգոստոսի 23-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ,

բ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը ներկայացրել է «ՀՐԱԶԴԱՆ-ՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ուղղված գրությունը, որով «ՀՐԱԶԴԱՆ-ՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերությունն իր համաձայնությունն է հայտնում իրեն պատկանող 1000մմ տրամաչափով խողովակը Ընկերությանը տրամադրելուն՝ Մարմարիկ գետից ջուր վերցնելու նպատակով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի 2016 թվականի մարտի 31-ի №02/07/634-16 գրությունը, որի համաձայն Մարմարիկի ջրամբարը վերակառուցված է ոռոգման ջրապահանջի առաջնահերթ ապահովման նպատակով, և նախագծային հեռանկարային ջրապահանջի ծավալներում ներառվում են միայն «ՄԻԿԱ-ՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերության տեխնիկական ջրամատակարարման ելքերը՝ հաշվարկված և արտացոլված 0.13 մ³/վ չափով, իսկ «Նարեկ-Լ.Կ» փոքր հիդրոէլեկտրակայանը ջուր կարող է ստանալ «ՄԻԿԱ-ՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերության իրավահաջորդ՝ «ՀՐԱԶԴԱՆ-ՑԵՄԵՆՏ» փակ բաժնետիրական ընկերության գործարանի տեխնիկական ջրագծից՝ վերջինիս ջրօգտագործման թույլտվության չափաքանակի սահմաններում՝ չխախտելով ջրամբարի շահագործման ռեժիմը:

Ընկերությունը նաև հայտնել է, որ նշված ջրաքանակը չի ապահովում փոքր հիդրոէլեկտրակայանի աշխատանքային ռեժիմը՝ ըստ նախկինում ստացված №000177 ջրօգտագործման թույլտվության 1180.0 լ/վրկ չափաքանակի՝ օգտագործված ջուրը վերադարձնելով Մարմարիկ գետ:

գ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը սահմանված ժամկետում չի կատարել Որոշման 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջը, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Որոշան 3-րդ կետի 1-ին ենթակետի պահանջի խախտման հիմքով կասեցնել Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2002 թվականի փետրվարի 20-ի «Նարեկ-Լ.Կ.» ՍՊԸ-ին էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №8 որոշմամբ «Նարեկ-Լ.Կ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված և

Հանձնաժողովի 2004 թվականի դեկտեմբերի 24-ի №177Ա որոշմամբ Ընկերության անվամբ վերաձևակերպված էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0084 լիցենզիայի գործողությունը՝ մինչև խախտման պատճառի վերացումը՝ այն է մինչև Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդան քաղաքի ցեմենտի գործարանի տեխնիկական ջրատարի վրա կառուցված փոքր հիդրոէլեկտրակայանի շահագործման նպատակով ջրօգտագործման թույլտվության և տեխնիկական ջրատարի օգտագործման (ջրատարից օգտվելու) կամ ջրատարին միանալու պայմանագրի (թույլտվության) պատճենների Հանձնաժողով ներկայացումը:

2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումը բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ այն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանը օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ